

«Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ-Հայաստան» ծրագրի

Շահառուների խորհրդի 2009 թվականի օգոստոսի 4-ին ժամը 15:00-ին կայացած նիստի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 15

Նիստին մասնակցում էին Շահառուների խորհրդի անդամներ՝

Ասատրյան Լիլիթ	«Հայաստանի երիտասարդ կանանց ասոցիացիա» ՀԿ
Ջադոյան Կարեն	«Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» ՀԿ
Խաչատրյան Լիա	«Զարգացում և ինտեգրացիա» ՀԿ
Գալստյան Կարեն, Նարինե Մախյանի լիազոր ներկայացուցիչ	«Փոքր և միջին բիզնեսի» հիմնադրամ
Ոսկանյան Արման	«Տավուշի զարգացման» ՀԿ
Մովսիսյան Կարինե	«Գորիսի Երիտասարդական Միություն» ՀԿ
Տեր-Հովակիմյան Ալեքսանդր	«Հայաստանի բժիշկ-ուսանողների գիտական ասոցիացիա» ՀԿ
Դանիելյան Նորայր, Վիկտոր Ենգիբարյանի լիազոր ներկայացուցիչ	«Հայաստանի եվրոպական շարժում» ՀԿ
Շահինյան Պողոս	«Ճանապարհային անվտանգության ազգային խորհուրդ» ՀԿ
Հովսեփյան Աշոտ, Միհրան Հովհաննիսյանի լիազոր ներկայացուցիչ	«Եղվարդ» ՋՕԸ
Նազարյան Հազարապետ	«Եղեգնաձոր» ՋՕԸ
Համբարձումյան Սասուն	«Քաղաքացիական ծառայողների ասոցիացիա» ՀԿ

Նիստից բացակայում էին՝

Ղազարյան Տոնական	«Շենիկ» ՋՕԸ
Վերանյան Անդրանիկ	«Նոյեմբերյանի համայնքների միություն» ԻԱՄ
Միքայելյան Շիրակ	«Աշխատանք և հայրենիք» ՀԿ

Նիստին մասնակցում էին նաև՝

Հովսեփյան Արա	Գլխավոր գործադիր տնօրեն, ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ
Գրիգորյան Վիկտորյա	ՇԽ օգնական
Հարությունյան Գայանե	ՀՄԿ Հայաստանյան գրասենյակի կառավարիչ

Համաձայն ՇԽ Կանոնակարգի 3.12 կետի (ՇԽ նիստերը նախագահում են ՇԽ անդամները՝ ռոտացիոն սկզբունքի հիման վրա՝ ըստ ՇԽ անդամների անունների այբբենական կարգի)՝ նիստը նախագահում էր ՇԽ անդամ Արման Ոսկանյանը:

Նախագահողն առաջարկեց հաստատել նախօրոք ներկայացված օրակարգը՝

1. 15:00 – ՇԽ անդամների ընտրության կարգի քննարկում

ՇԽ կանոնակարգային հանձնաժողովի անդամներ Կ. Չաղոյան, Լ. Խաչատրյան, Ա. Տեր-Հովակիմյան, Պ. Շահինյան

2. 15:30 – ՇԽ ընտրության ժամանակացույցի և առաջիկա գործողությունների հստակեցում

3. 16:00 – ՇԽ հաշվետվության նախագծի քննարկում

ՇԽ հաշվետվության համար պատասխանատու անդամներ Լ. Ասատրյան, Ա. Վերանյան, Ա. Ոսկանյան, Վ. Ենգիբարյան

4. 16:30 - Այլ հարցեր

Օրակարգը հաստատվեց միաձայն.

Օրակարգի առաջին հարցի վերաբերյալ

Օրակարգի առաջին հարցի վերաբերյալ հանդես եկավ Կ. Չաղոյանը: Նա նշեց, որ կանոնակարգային հարցերով հանձնախումբը քննարկել է ՇԽ անդամների ընտրության կանոնակարգը և հանգել է այն եզրահանգման, որ նախկինում կիրառված Շահագրգիռ կազմակերպությունների ընդհանուր ժողով անցկացնելու սկզբունքը այնքան էլ արդարացված չէ: Կ. Չաղոյանը պարզաբանեց այդ փաստը նրանով, որ նախ, ՀՄՀ-Հայաստան ծրագրի կառավարման փաստաթղթերում նման ժողով անցկացնելու պահանջ չկա: Օրինակ, Համաձայնագրում ասվում է, որ պետք է լինի ժողով (ներ), որտեղ պետք է ընտրվեն խորհրդի անդամները: Մյուս փաստարկն այն էր, որ ՇԽ-ը իր ընտրազանգվածից, այն է ավելի, քան 400 ոչ կառավարական, ոչ պետական կազմակերպություններից ստացել է գործունեության մեկամյա մանդատ, մինչդեռ Շահագրգիռ կազմակերպությունների ընդհանուր ժողովը մանդատ չունեցող մարմին է:

Այս ֆորմատով Կ. Չաղոյանը կանոնակարգային հարցերով հանձնախմբի անունից ՇԽ-ին առաջարկեց ընտրակարգից հանել Շահագրգիռ կազմակերպությունների ընդհանուր ժողով անցկացնելու բաժինը և դրա հիմնական գործառույթները, այն է, ընտրակարգի հաստատումը և ընտրական հանձնաժողովի ընտրությունը, ընդգրկել ՇԽ գործառույթների շրջանակներում: Մյուս կողմից, հանրային մասնակցությունն ապահովելու համար առաջարկվեց ընտրակարգի շուրջ անցկացնել հանրային քննարկումներ, իսկ ընտրական հանձնախմբի անդամներին ընտրել բաց մրցույթով: Այն պարագայում, եթե ՇԽ-ի մեծամասնությունը կողմ լինի ներկայացված մոտեցմանը, հանձնախումբը մինչև մյուս ՇԽ-ը նիստը կմշակի ընտրակարգի նախագիծը:

Հանձնախմբի անդամ Ա. Տեր-Հովակիմյանը նույնպես արտահայտվեց: Նա նշեց, որ հասարակական սեկտորի կողմից լիազորված մարմինը ՇԽ-ը է, որը կարող է իրականացնել ընտրական գործընթացը, միևնույն ժամանակ կիրառել բոլոր հնարավոր մեխանիզմները գործընթացը հնարավորինս թափանցիկ կազմակերպելու համար. անցկացնել կանոնակարգի հանրային լսումներ, ընտրական հանձնաժողովում բացառել ՇԽ անդամների ներկայացվածությունը և այլն:

Հանդես եկավ ծրագրի տնօրեն Արա Հովսեփյանը: Նա նշեց, որ Շահագրգիռ կազմակերպությունների ընդհանուր ժողովի գաղափարը եկել է ՇԽ առաջին տարվա կազմից, երբ դեռ հստակ չէին ՇԽ անդամների ընտրության մեխանիզմները: Ճիշտ է, որ ծրագրի կառավարող փաստաթղթերում ընդհանուր ժողով անցկացնելու պահանջ չի դրվում:

Շահառուների խորհուրդն է կոչված որոշում կայացնելու ՇԽ անդամների ընտրությունը անցկացնելու հիմնական մոտեցումների վերաբերյալ, իսկ ՊՈԱԿ-ի պարտավորությունն է ապահովել, որպեսզի ընտրությունները անցկացվեն ազատ, արդար և թափացիկ սկզբունքների համաձայն:

Նախագահող Ա. Ոսկանյանը հարց բարձրացրեց ընտրական հանձնաժողովի անդամների ընտրության հնարավոր ձևաչափի վերաբերյալ: Հանձնախմբի անդամները պատասխանեցին, որ այն կարելի է անցկացնել բաց հայտարարություն տարածելու ճանապարհով:

Ծավալվեց ընդհանուր քննարկում վերնշաղի վերաբերյալ: Քննարկման ընթացքում հնչած հիմնական տեսակետները և կարծիքները ներկայացվում են ստորև.

ՇԽ անդամ Լ. Ասատրյանը մի քանի անգամ դիմեց ՇԽ անդամներին՝ պահպանելու Շահագրգիռ կազմակերպությունների ընդհանուր ժողովը: Նա հիմնավորեց դա հետևյալ հիմնական փաստարկներով՝ այդ ժողովը կարող է ՇԽ-ի համար ծառայել նաև որպես հաշվետու ժողով, ինչպես նաև կազմակերպել ընտրական հանձնաժողովի անդամների ընտրությունը, որի այլ կերպ անցկացումը կդիտարկվի ոչ այնքան ժողովրդավար և հանրային:

ՇԽ անդամ Պ. Շահինյանը նույնպես պաշտպանեց Լ. Ասատրյանի տեսակետը, որ պետք է գումարել ընդհանուր ժողով ընտրական հանձնաժողով ընտրելու նպատակով:

Կ. Մովսիսյանը ընդհանուր առմամբ կողմ էր ընդհանուր ժողովի անցկացմանը, քանի որ կարծում էր, որ այդ ժողովը կապահովի հանրայնություն և կներգրավվի հետաքրքրված մարդկանց գործընթացի մեջ, միևնույն ժամանակ դեմ չէր, եթե ՇԽ-ը որոշեր ձեռնպահ մնալ նման հանդիպում անցկացնելուց:

Քննարկման արդյունքում քվեարկության դրվեցին հետևյալ առաջարկությունները՝

1. չանցկացնել ընդհանուր ժողով և դրա գործառույթները թողնել ՇԽ-ին.
կողմ՝ 4 (Կ. Չաղոյան, Ա. Տեր-Հովակիմյան, Լ. Խաչատրյան, Կ. Գալստյան), դեմ՝ 2 (Լ. Ասատրյան, Պ. Շահինյան), ձեռնպահ՝ 5 (Ա. Ոսկանյան, Հ. Նազարյան, Ա. Հովսեփյան, Ս. Համբարձումյան, Կ. Մովսիսյան)
2. ՇԽ ընտրակարգում պահպանել ընդհանուր ժողով անցկացնելու սկզբունքը՝ ընտրելու ընտրական հանձնաժողով և ՇԽ հանշվետությունը ներկայացնելու նպատակով.
կողմ՝ 5 (Լ. Ասատրյան, Պ. Շահինյան, Կ. Մովսիսյան, Հ. Նազարյան, Ա. Հովսեփյան), դեմ՝ 1 (Կ. Չաղոյան), ձեռնպահ՝ 5 (Ա. Տեր-Հովակիմյան, Լ. Խաչատրյան, Կ. Գալստյան, Ա. Ոսկանյան, Ս. Համբարձումյան)

Այսպիսով, քվեարկության արդյունքում որոշվեց ՇԽ ընտրակարգում պահպանել ընդհանուր ժողովը:

Կանոնակարգային հարցերով հանձնախմբի անդամներ Կ. Չաղոյանն ու Ա. Տեր-

Հովակիմյանն ինքնաբացարկ հայտնեցին ընտրակարգը մշակելու գործընթացից՝ այն պատճառաբանելով ընդհանուր ժողով անցկացնելուն սկզբունքորեն դեմ իրենց տեսակետով:

Հանդես եկավ նաև ծրագրի տնօրենն Ա. Հովսեփյանը. նա իր մտահոգությունը հայտնեց այն մասին, որ ընդունած որոշումը կրում է ոչ լիարժեք բնույթ. դրանով հնարավորություն է տրվում անցկացնել ընդհանուր ժողով, բայց կրճատում է ժողովի իրավասությունները: Նրա կարծիքով պետք է ընտրել երկու տարբերակներից մեկը՝ կա՛մ ընտրակարգը թողնել, այնպես, ինչպես որ կա (չնայած այս տարբերակը աշխատատար է, այն փորձված տարբերակ է), կա՛մ՝ ընտրությունների կազմակերպման գործընթացը ամբողջությամբ թողնել ՇԽ-ին, իսկ ՊՈԱԿ-ը իր վրա կվերցնի տեխնիկական կազմակերպման հարցերը:

Ա. Հովսեփյանը հորդորեց ՇԽ անդամներին շարունակել քննարկումները հարցի շուրջ և հանգել լիարժեք որոշման, որը նաև կբխի ծրագրի շահերից:

Ծավալվեց քննարկում, որտեղ ՇԽ անդամները ևս մի անգամ հնարավորություն ունեցան արտահայտել իրենց դիրքորոշումները հարցի կապակցությամբ.

Հանձնախմբի անդամներ Կ. Զադոյանը և Ա. Տեր-Հովակիմյանը պնդեցին իրենց մոտեցումը, որ ընդհանուր ժողով անցկացնելու անհրաժեշտություն չկա, այդ օղակը իրավական դաշտում մանդատ չունեցող մարմին է: Պետք չէ նաև գերի դառնալ այն տեսակետին, որ նախորդ տարիներին ընդհանուր ժողովներ են անցկացվել, չէ որ ՇԽ-ի այս կազմն էր, որ մշակեց և կիրառության մեջ դրեց ՇԽ լիարժեք կանոնակարգը:

ՇԽ անդամներ Լ. Ասատրյանը և Պ. Շահինյանը մնացին այն կարծիքին, որ ընդհանուր ժողովը պետք է պահպանել. ընտրական հանձնաժողովի անդամների ընտրության մեխանիզմները հստակ չեն, պրոցեսը դժվարանում է և դառնում ավելի փակ:

Առաջարկություն եղավ չեղյալ համարել նախորդ ՇԽ քվեարկության արդյունքները՝ ՇԽ անդամների նախընտրությունը կրկին պարզելու համար: Առաջարկությունը դրվեց քվեարկության և հաստատվեց 7 (Կ. Զադոյան, Ա. Տեր-Հովակիմյան, Լ. Խաչատրյան, Կ. Գալստյան, Ա. Ոսկանյան, Ս. Համբարձումյան, Կ. Մովսիսյան)՝ կողմ, 0՝ ձեռնպահ, 4 (Լ. Ասատրյան, Պ. Շահինյան, Հ. Նազարյան, Ա. Հովսեփյան,)՝ դեմ ձայներով:

Քննարկման արդյունքում նախագահողն առանձնացրեց երեք առաջարկություններ, որոնք դրվեցին քվեարկության.

1. Շահագրգիռ կազմակերպությունների ընդհանուր ժողով չանցկացնել, փոխարենը դրա լիազորությունները փոխանցել ՇԽ-ին.
կողմ՝ 7 (Կ. Զադոյան, Ա. Տեր-Հովակիմյան, Լ. Խաչատրյան, Կ. Գալստյան, Ա. Ոսկանյան, Ս. Համբարձումյան, Հ. Նազարյան), դեմ՝ 1 (Լ. Ասատրյան), ձեռնպահ՝ 3 (Պ. Շահինյան, Կ. Մովսիսյան, Ա. Հովսեփյան)
2. ՇԽ նախորդ ընտրակարգը թողնել այնպես, ինչպես կա.
կողմ՝ 0, դեմ՝ 3 (Կ. Զադոյան, Ա. Տեր-Հովակիմյան, Լ. Խաչատրյան), ձեռնպահ՝ 8 (Լ. Ասատրյան, Պ. Շահինյան, Հ. Նազարյան, Ա. Հովսեփյան, Կ. Գալստյան, Ա. Ոսկանյան, Ս. Համբարձումյան, Կ. Մովսիսյան)
3. Ընտրակարգում պահպանել ընդհանուր ժողովի սկզբունքը՝ միայն ընտրական հանձնաժողով ընտրելու իրավասությամբ.

կողմ` 4 (Լ. Ասատրյան, Պ. Շահինյան, Ա. Հովսեփյան, Կ. Մովսիսյան), դեմ` 4 (Կ. Չաղոյան, Ա. Տեր-Հովակիմյան, Լ. Խաչատրյան, Կ. Գալստյան), ձեռնպահ` 3 (Հ. Նազարյան, Ա. Ոսկանյան, Ս. Համբարձումյան):

Այսպիսով, քվեարկության արդյունքում նախապատվությունը տրվեց առաջին տարբերակին` հրաժարվել ընդհանուր ժողովից և դրա լիազորությունները ամբողջությամբ հանձնել ՇԽ-ին, և հանձնարարվեց կանոնակարգային հանձնաժողովի անդամներին կանոնակարգի նախագիծը մշակել համապատասխանաբան` վերապահումով, որ ՇԽ առաջիկա նիստին/երին կանցկացվեն հավելյալ քննարկումներ ամբողջական կանոնակարգի վերաբերյալ:

Կ. Չաղոյանը հանդես եկավ նաև առաջարկությամբ ՇԽ անդամների քանակը 15-ից նվազեցնել 11-ը` հաշվի առնելով ծրագրի ծավալների կրճատումները:

ՇԽ անդամ Լ. Ասատրյանը դեմ արտահայտվեց վերոնշյալ առաջարկությանը:

Նախագահողն առաջարկեց նոր առաջարկությունները և քննարկումները հետաձգել մինչև մյուս ՇԽ նիստը:

Ելնելով վերոնշյալից` կանոնակարգային հարցերով հանձնախմբի անդամներն առաջարկեցին առաջիկա մեկ շաբաթվա ընթացքում մշակել կանոնակարգի նախագիծը և ներկայացնել ՇԽ քննարկմանը:

Որոշվեց հաջորդ հերթական ՇԽ նիստը գումարել օգոստոսի 12-ին, ժամը 16:00-ին:

Նախագահող` Ա. Ոսկանյան

Քարտուղար` Վ. Գրիգորյան

4-րդ օգոստոսի, 2009թ.